ՔՈ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԱՐԴ

ԷՔՍՏՐԱՍԵՆՍ, ԳՈՒՑԵ ԹԵ...

Վերջերս մեզ մոտ հաճախ են հանդես գալիս նոր մարգարեներ, կախարդներ, բախտագուշակներ, ապաքինողներ: Ենթադրում են, թե դա պայմանավորված է մեր ժամանակների անցումային իրադարձություններով, քաղաքային իրավիճակներով, որոնք էլ ոմանց հնարավորություն են տալիս բացահայտել իրենց թաքնված ընդունակությունները:

Այս երիտասարդը (տես նկարում) ևս ցուցադրում է մարդկային օրգանիզմի յուրահատուկ առանձնահատկությունը՝ մագնիսացած ափը: Սակայն նրա հնարավորությունները միայն սրանով չեն սպառվում: Օժտված է ուժեղ կենսադաշտով:

Յակուբով Ռոլանդը 16 տարեկան է, ազգությամբ ասորի, սովորում է տասնմեկերորդ դասարանում, ապրում է Արզնիում տատի հետ:

Ի՞նչ ունակություններով է նա օժտված: Ձեռքի բոլոր մատներից կարողանում է կախել մետաղյա իրեր՝ թելի գդալներ, դանակ, արդուկ, թղթերի կապուկ: Որոշակի հնարավորությունից ձեռքերից ջերմություն է արտահոսում, որը անմիջապես զգում ես: Ձեռքերը շփելիս կարող են այրվածքներ առաջանալ, խրմ բագրության աշխատողների ներկայությամբ նա այրեց միջնամատը, իսկ անհոտ մեխակին կարողացավ բույր հաղորդել:

Սակայն ամենակարևորը, որ գործնական նշանակություն կարող է ունենալ, նրա կողմից հիվանդությունների ախտորոշումն ու բուժումն է: Իր խոստովանությամբ հիվանդությունները նա ընկալում է տարբեր

մատներով, երբ ձեռքը հեռվից սահեցնում է հիվանդի մարմնի վրայով (օրինակ, գլխացավի դեպքում ազդակը ստանում է բութ մատը, ճնշման դեպքում՝ մատնեմատը և այլն): Տղան կարողանում է նաև բուժել դրանք: Դրա համար անցկացնում է 15 րոպեանոց բուժական սեանս: Ըստ իր հավաստիացումների և մեզ տրամադրած նամակների բուժվել են բազմաթիվ հիվանդներ՝ Անուշ Հովհաննիսյանը (կարճատեսություն), Լիդա Վասիլևան (շաքարախտ), Սվետլանա Գրիգորյանը «հոդացավեր», Լիդա Հարությունյանը (սրտային ծակոցներ), Մարգո Վենյամինովան (վթարից հետո եղած հոդային ցավեր, ներքին օրգանների ախտահարում), Պայծառ Ներսիսյանը (ծայրանդամների այտուցվածություն): Բուժումը կարող է ընթանալ 1-3 սեանսով:

Իր պատմելով՝ կանխատեսող երազներ է տեսնում: Իսկ այս ունակությունները ձեռք է բերել վեց տարի առաջ, պապի մահվանից հետո, երբ երազում նրան է հայտնվել Մարիամ աստվածածինը և ասել, որ տղան կլինի իր երկրորդ որդին՝ Հիսուսից հետո:

Դե ինչ, հավատա՞լ, թե ոչ: Ապացուցված է, որ յուրաքանչյուր հրաշագործ անթերի տիրապետում է բնության օրենքներին: Անհատը էլեկտրամագնիսական ուժերի հավաքածու է և այդ միջոցով կարող է իր մտքի ուժը հաղորդել շրջապատին, լինի առարկա, թե անձ: Օժտված անհատներին դա հաջողվում է: Իսկ բուժման մեխանիզմը, անկասկած, կախված է բուժվողի հավատի ուժից:

Ս. ՀՈՎԵՅԱՆ

ՖԱԴԵԵՎԻ ՆԱՄԱԿԸ ԳՐՎԱԾ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ

1956 թ. մայիսի 13-ին ժամը 15-ի մոտ Պերեդելկինոյի իր ամառանոցում ատրճանակի կրակոցով կյանքին վերջ տվեց ԽՄԿԿ անդամության թեկնածու, գրող Ալեքսանդր Ֆադեևը: Այսպես ավարտեց իր կյանքը խորհրդային խոշոր գրողը, որի ստեղծագործությունները խորը հետք են թողել միլիոնավոր մարդկանց սրտերում:

*Հետաքննությունից պարզվել է, որ դրանից մի օր առաջ իր մոսկովյան բնակարանում երկարատև զրույց է ունեցել գրողներ Ս. Մարշակի, Ն. Պոգոդինի հետ: Երեկոյան 11-ամյա որդու հետ եկել է ամառանոց՝ Պերեդելկինո, ուր անցկացրել է կանանց հետ: Ֆադեևի ինքնասպանությունը ոչ ոքի չի զարմացրել